ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 11

ՀՀԿԳՄՆԷԱՃԱՊՁԲ-22/76 ծածկագրով էլեկտրոնային աճուրդով թատրոնի բեմի լուսային, ձայնային համակարգերի և պրոյեկտորների /«Հ. Պարոնյանի անվան երաժշտական կոմեդիայի պետական թատրոն» ՊՈԱԿ/ գնման գործընթացի գնահատող հանձնաժողովի նիստի

Գնահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ 24.06.2022թ. ժամը 12:00-ին էլեկտրոնային գնումների e-auctions համակարգի միջոցով:

Ք.Երևան

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝ Արմեն Ավետիսյան

Հանձնաժողովի անդամ՝ Հարություն Բարղության

Կարեն Սահակյան

Հարություն Մարտիրոսյան

Հանձնաժողովի քարտուղար՝ Աննա Սիմոնյան

1. Տեղեկատվություն օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից՝ հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի հիմնավորումների մասին.

1.1 Ընթացակարգի հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի վերաբերյալ հիմնավորումներ չեն ներկայացվել:

2. Տեղեկատվություն հայտեր ներկայացրած մասնակիցների մասին.

2.1 Ընթացակարգին հայտ են ներկայացրել հետևյալ կազմակերպությունները.

Հ/Հ	Մասնակիցների անվանումները
1	«ՍՄԱՐԹԼՈՋԻՍԹԻՔՍ» ՍՊԸ
2	«Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ
3	«Պրոզոն» ՍՊԸ
4	«էս Յե Թրեյդ» ՍՊԸ
5	«ՊՌՈ Ինվեստ» ՍՊԸ

3. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը.

3.1 Ընթացակարգով կայացած հակադարձ աճուրդի արդյունքում մասնակիցները ներկայացրել են հետևյալ գնային առաջարկները.

Հ/Հ	Նախահաշվային գինը, ՀՀ դրամ	Մասնակիցների անվանումները				
		«ՍՄԱՐԹԼՈՋԻՍԹԻՔՍ» ՍՊԸ	«Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ	«Պրոզոն» ՍՊԸ	«էս Յե Թրեյդ» ՍՊԸ	«ՊՌՈ Ինվեստ» ՍՊԸ
		Վերջնական առաջարկված գինը, ՀՀ դրամ				

		Առանց ԱԱՀ	Առանց ԱԱՀ	Առանց ԱԱՀ	Ներառյալ ԱԱՀ-ն	Առանց ԱԱՀ	Ներառյալ ԱԱՀ-ն	Առանց ԱԱՀ	Ներառյալ ԱԱՀ-ն	Առանց ԱԱՀ	Ներառյալ ԱԱՀ-ն
1	177482100	500000000	600000000	-	-	-	-	-	-	-	-
2	108625000	500000000	600000000	-	-	-	-	-	-	-	-
3	79645200	500000000	600000000	23000000	27600000	24000000	28800000	26400000	31680000	59400000	59400000

4.Հակադարձ աճուրդի արդյունքում համակարգի կողմից 1-ին տեղ զբաղեցրած մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ սահմանված պայմաններին համապատասխանության գնահատման մասին

4.1 «Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ի ներկայացրած փաստաթղթերի սահմանված պայմաններին համապատասխանության գնահատման արդյունքների արձանագրման նպատակով հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել հանձնաժողովի կողմից փաստաթղթերը հրավերով սահմանված ժամկետում ուսումնասիրելուց հետո, ս.թ հունիսի 29-ին ժամը 15:00-ին:

Ընդունվել է որոշում՝ կողմ 4, դեմ 0:

Գնահատող հանձնաժողովի նիստը շարունակվեց 29.06.2022թ ժամը 15:00-ին

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝ Արմեն Ավետիսյան

Հանձնաժողովի անդամ՝ Հարություն Բարղության

Կարեն Սահակյան

Հարություն Մարտիրոսյան

Հանձնաժողովի քարտուղար՝ Աննա Սիմոնյան

5. Հակադարձ աճուրդի արդյունքում համակարգի կողմից 1-ին տեղ զբաղեցրած մասնակցի հայտի կազմման և ներկայացման՝ հրավերի պահանջներին համապատասխանության, հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին.

5.1 «Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ի կողմից 3-րդ չափաբաժնի համար ներկայացված հայտը կազմվել և ներկայացվել է հրավերի պահանջներին համապատասխան, հայտում առկա են հրավերով պահանջվող փաստաթղթերը,

5.2 «Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ի կողմից հայտում առկա փաստաթղթերը չեն համապատասխանում հրավերով սահմանված պահանջներին, մասնավորապես՝ հայտով ներկայացված ապրանքի ամբողջական նկարագրում առկա է ավելորդ, բնութագրին չվերաբերվող և արտադրությունից հանված ապրանքների մասին տեղեկատվություն:

Ընդունվել է որոշում՝ կողմ 4, դեմ 0:

6. Գնման գործընթացի կասեցման մասին

6.1 Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետը՝ կասեցնել գնահատման գործընթացը և առաջարկել «Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ին մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել 5.2 կետում արձանագրված անհամապատասխանությունը:

Ընդունվել է որոշում՝ կողմ 4, դեմ 0:

6.2 Հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել 2022թ հուլիսի 6-ին, ժամը 15:00-ին, ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն, Վազգեն Սարգսյան 3, Կառավարական տուն 2, 6-րդ հարկ, 611 սենյակ հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ 4, դեմ 0:

Գնահատող հանձնաժողովի նիստը շարունակվեց 06.07.2022թ. ժամը 15:00-ին

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝ Արմեն Ավետիսյան

Հանձնաժողովի անդամ՝ Հարություն Բարղության

Կարեն Սահակյան

Հարություն Մարտիրոսյան

Հանձնաժողովի քարտուղար՝ Աննա Սիմոնյան

7. Գնման գործընթացի գնահատման ընթացքում արձանագրված անհամապատասխանությունների շտկման մասին.

7.1 «Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ն սահմանված ժամկետում շտկել է 5.2 կետում արձանագրված անհամապատասխանությունը:

Ընդունվել է որոշում՝ կողմ 4, դեմ 0

8. Տվյալներ մերժված և առաջին տեղ զբաղեցրած մասնակիցների վերաբերյալ.

8.1 Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածը՝ 3-րդ չափաբաժնի մասով 1-ին տեղ զբաղեցրած և բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցներից ընտրված մասնակից ճանաչել՝ «Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ–ին:

Ընդունվել է որոշում՝ կողմ 4, դեմ 0:

8.2 Հակադարձ աճուրդի արդյունքում «ՍՄԱՐԹԼՈՋԻՍԹԻՔՍ» ՍՊԸ-ի հայտը 1-3-րդ չափաբաժինների մասով մերժվել է համակարգի կողմից նախահաշվային գինը գերազանցելու հիմքով:

Ընդունվել է որոշում՝ կողմ 4, դեմ 0

8.3 Մերժել «Պրոզոն» ՍՊԸ-ի, «էս Յե Թրեյդ» ՍՊԸ-ի և «ՊՌՈ Ինվեստ» ՍՊԸ-ի հայտերը 3-րդ չափաբաժնի մասով՝ հիմք ընդունելով ՀՀ կառավարության 18.05.2017թ թիվ 534-Ն որոշմամբ հաստատված կարգի 10-րդ կետի 2-րդ ենթակետը:

Ընդունվել է որոշում՝ կողմ 4, դեմ 0

9. Գնահատման արդյունքների մասին

9.1 Հրապարակել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը՝ ըստ որի «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն անգործության ժամկետ սահմանել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 10-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը, որից հետո ընտրված մասնակցին ԷԱՃ-ով գնումների կազմակերպման կարգին համապատասխան ներկայացնել պայմանագիր կնքելու առաջարկ:

9.2 Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը՝ 1-2-րդ չափաբաժինների մասով գնման գործընթացը հայտարարել չկայացած՝ հայտերից ոչ մեկը հրավերի պայմաններին չհամապատասխանելու հիմնավորմամբ:

Ընդունվել է որոշում՝ կողմ 4, դեմ 0

Գնահատող հանձնաժողով՝

_____ Արմեն Ավետիսյան /նախագահ/

_____ Հարություն Բարղության

_____ Կարեն Սահակյան

_____ Հարություն Մարտիրոսյան

_____ Աննա Սիմոնյան /քարտուղար/